


Հ.Հ.ԲԱԴԵՅԱՆ

Գյուղատնտեսական կենդանիների առավել
տարածված եւ խիստ վնասակար ճիճվային
հիվանդությունները
Հայաստանի Հանրապետությունում



Երևան 2011

ՆԱԽԱԲԱՆ

Գրքույկում ամենասեղմ ծավալով նկարագրված են Հայաստանում գյուղատնտեսական կենդանիների առավել տարածված և խիստ վնասակար ճիճվային հիվանդությունները (հելմինթոզները): Շարադրված են այդ հիվանդություններով կենդանիների վարակման ձևերը և ուղիները, հիվանդության հարուցիչների՝ հելմինթների տեսակները, դրանց զարգացման առանձնահատկությունները, հիվանդությունների տարածվածությունը, դրանց պատճառած տնտեսական վնասը, ախտանիշները, բուժումը և կանխարգելման միջոցառումները:

Գրքույկը նախատեսված է հանրապետության ֆերմերների, անասնատերերի, նրանց ընտանիքի անդամների, հատկապես բարձր դասարանների աշակերտների (որոնք այսպիսի հարցերի նկատմամբ բավականին հետաքրքրասեր են), բնականաբար նաև անասնաբուժական մասնագետների համար: `

Ծանոթանալով ձեռնարկին, պարզ կդառնա, թե ինչպիսի տարատեսակ և բազմազան են ճիճուների աշխարհը և դրանց կողմից հարուցված հիվանդությունները:

Ուշադրությամբ և մանրամասն ուսումնասիրելով կենդանիների հելմինթոզները, դրանց նկատմամբ ապահովելով ընդհանուր կանխարգելման միջոցառումներ, իսկ, անհրաժեշտության դեպքում, կիրառելով նաև հակահելմինթոզային միջոցառումներ, հնարավոր կլինի զգալիորեն կրճատել հելմինթոզների թիվը, զերծ մնալով դրանցով անասնապահությանը հասցվող տնտեսական վնասներից:

Չամառուր տեղեկություններ հեղինակների և անասնապահությանը հասցրած դրանց վնասների մասին

Հեղինակները որդեր, ճիճուներ, ամբողջ աշխարհում տարածված կենդանատեսակներ են, որոնց մի զգալի մասը զարգացման որոշակի փուլում տեղակայվում է մարդու, կենդանիների օրգանիզմում և բույսերի մեջ՝ առաջ բերելով որոշակի հիվանդություններ, որոնք կոչվում են հեղինակներ: Բնության մեջ գոյություն ունի հեղինակների 2 խումբ՝

1) ազատ ապրող հեղինակներ, որոնք կյանքի ընթացքում ապրում են բնության մեջ՝ չառնչվելով ոչ մի տեսակ կենդանու հետ;

2) մակաբույծներ, որոնք կյանքի որոշակի փուլում ապրում են կենդանիների օրգանիզմի տարբեր օրգաններում:

Մակաբույծ (պարազիտ) հեղինակները, ըստ իրենց մարմնի կառուցվածքի, բաժանվում են 4 տեսակի՝ տափակ որդեր կամ ծծաններ, երիզորդներ կամ ժապավենաձև որդեր, կլոր որդեր և փշագլուխներ:

Տափակ որդերը (ծծաններ) փոքր, որոշ դեպքերում 3-7 սմ երկարության, տերևանման կամ կլորավուն, երկսեռ հեղինակներ են:

Երիզորդները երկար, 1 սմ-ից մի քանի մետրի հասնող հեղինակներ են, ունեն գլխիկ՝ զինված ծծիչներով, որոնցով ամրանում են աղիների պատին, մարմինը կազմված է սեզմենտներից, հերմոֆրատիտ են:

Կլոր որդերը ունեն թելանման կամ իլիկանման մարմին, դրանց երկարությունը տատանվում է մի քանի միլիմետրից մինչև մեկ մետրի սահմաններում, տարասեռ են:

Փշագլուխները արտաքին տեսքով նման են կլոր որդերին, սակայն մարմնի առջևում ունեն հատուկ կնճիթ՝ զինված մի քանի շարք խիտինային կարթերով, երկարությունը մի քանի միլիմետրից մի քանի տասնյակ սանտիմետր, տարասեռ են:

Հեղինակները, մակաբույծելով կենդանու օրգանիզմում, մեխանիկորեն վնասում են այն օրգանը, որում տեղակայված են, սնվում են դրա հաշվին, իսկ իրենց կողմից արտադրված նյութերը թունավորում են կենդանու օրգանիզմը:

Հեղինակների կողմից կենդանու հասցրած վնասը կախված է ինչպես հեղինակի տեսակից և դրա կողմից արտազատված թույներից, տեղակայված օրգանի կարևորությունից, այնպես էլ տվյալ օրգանում մակաբուծող հեղինակներ-

րի քանակից:

Հաճախ, կենդանու օրգանիզմում մեծ քանակությամբ հելմինթների մակարածման դեպքում, դրանք կարող են առաջ բերել խիստ արտահայտված ծանր ընթացող հիվանդություն, որը կարող է ավարտվել կենդանու անկումով: Չնայած ավելի հաճախ հելմինթների կողմից հարուցված հիվանդություններն ընթանում են ոչ ցայտուն նշաններով, խրոնիկական ձևով, սակայն այս դեպքում օրգանիզմի ախտահարման պատճառով պակասում է կենդանիների մթերատվությունը, իսկ խնամքի և կերակրման վատ պայմանների դեպքում, երբ ի հայտ են գալիս այլ հիվանդություններ, առաջին հերթին ավելի խիստ տուժում են հելմինթոզներով հիվանդ կենդանիները:

Ամենամոտավոր հաշվարկները ցույց են տալիս, որ ամենուրեք հելմինթների լայն տարածվածության և դրանց կողմից հաստատված հիվանդությունների հետևանքով աշխարհի ամբողջ բնակչությունը անասնապահական մթերքներ տարեկան պակաս է ստանում, միջին հաշվով, 15-20%-ով:

Ուստի առաջնահերթ խնդրի իմաստն այն է, որպեսզի վերացվեն կամ առավելագույն չափով նվազեցվեն կենդանիների խիստ տարածված և վտանգավոր հելմինթոզները, ինչը հնարավորություն կընձեռի զգալիորեն բարձրացնել կենդանիների մթերատվությունը և ավելացնել անասնապահական մթերքների արտադրության քանակը և որակը:

Հելմինթների բազմացումը և զարգացումը

Բոլոր տեսակի հելմինթները ձվերի կամ թրթուրների արտազատման ճանապարհով բազմանում են հսկայական քանակությամբ: Որոշ տեսակի հելմինթներ օրեկան արտազատում են մի քանի հարյուրից մինչև մեկ միլիոն ձու կամ թրթուր: Այդ է պատճառը, որ հելմինթները բնության մեջ ունեն այդպիսի լայն տարածվածություն: Հելմինթների ձվերը կամ թրթուրները այնքան փոքր են, որ անգեն աչքով տեսանելի չեն:

Հետաքրքիր է այն փաստը, որ, ինչպես ձվերը, այնպես էլ թրթուրները, չեն զարգանում այն տիրոջ օրգանիզմում, որտեղ տեղակայված են դրանց ծնողները: Սկզբնական շրջանում դրանք զարգանում են կամ արտաքին միջավայրում, կամ ուրիշ կենդանիների օրգանիզմում, որոնք կոչվում են միջանկյալ տերեր: Այն հելմինթները, որոնց թրթուրները զարգանում են արտաքին միջա

վայրում, կոչվում են գեոհելմինթներ: Վերջիններիս ձվերը կամ թրթուրները արտաքին միջավայր են ընկնում հիվանդ կենդանու կղկղանքի հետ: Արտաքին միջավայրում թրթուրները զարգանալով համապատասխան խոնավության և ջերմության պայմաններում, մի քանի մաշկափոխությունից հետո դառնում են ինվազիոն (վարակիչ), այս վիճակում ընկնում վերջնական տիրոջ օրգանիզմ (կերի, ջրի միջոցով), որոշակի ժամանակում դառնում սեռահասուն:

Թրթուրների ինվազիոն փուլ հասնելու տևողությունը տարբեր է տարբեր հելմինթների համար: Այն հելմինթները, որոնց թրթուրները զարգանում են ոչ թե արտաքին աշխարհում, այլ ուրիշ կենդանու, այսպես կոչված, միջանկյալ տիրոջ օրգանիզմում, կոչվում են բիոհելմինթներ, որոնց ձվերը կամ թրթուրները սկզբնական շրջանում, ինչպես գեոհելմինթները, ընկնում են արտաքին միջավայր, այնտեղից կերի հետ կամ ինքնուրույն մտնում միջանկյալ տիրոջ օրգանիզմ:

Որոշ հելմինթներ զարգանում են երկու միջնորդ տերերի մասնակցությամբ, զարգացման մեկ փուլը անցնում մեկ, հետագա փուլը մյուս տիրոջ օրգանիզմում: Երկրորդ միջնորդ տերը կոչվում է լրացուցիչ միջնորդ տեր: Միջնորդ տիրոջ օրգանիզմում դրանց զարգացման տևողությունը տարբեր է՝ կախված տիրոջ օրգանիզմի ջերմաստիճանից: Չարգացուցիչ սովորաբար տևում է մի քանի շաբաթից մի քանի ամիս:

Յուրաքանչյուր տեսակի հելմինթ կարող է ապրել միայն որոշակի վերջնական կամ միջանկյալ տիրոջ օրգանիզմում: Տափակ որդերի (ծծանների) համար, որպես միջնորդ տեր, համարվում են խխունջները, կլոր որդերի համար՝ (ֆիլարիայի խմբի) արյունածուծ միջատները, այլ հելմինթների համար՝ մրջյունները, ճպուռները և տարբեր անողնաշար կենդանիներ:

Մարդու երիզորդների համար, որպես միջնորդ տեր, կարող են լինել խոզերը և խոշոր եղջերավորները (ֆինաներ), շների երիզորդների միջնորդ տեր են համարվում տարբեր կաթնասունները:

Եթե միջնորդ տիրոջ օրգանիզմում գտնվող հելմինթի թրթուրը ուտի որևէ կենդանի, որի օրգանիզմում տվյալ հելմինթը չի մակաբուծում, ապա այդ հելմինթի թրթուրը տվյալ կենդանու օրգանիզմում չի զարգանա, կոչնչանա կամ սեռահասուն վիճակի չի հասնի:

Հելմինթների ձվերի և թրթուրների կենսազործունեության պահպանման տևողությունը արտաքին միջավայրում և միջնորդ տիրոջ օրգանիզմում տարբեր է:

Գեոհելմինթների մոտ այն առաջին հերթին կախված է բնության պայա-

մանցներից, արևի ճառագայթների ինտենսիվությունը, չորությունը, բարձր ջերմաստիճանը արագորեն ոչնչացնում են հելմինթների ինչպես ձվերին, այնպես էլ թրթուրներին: Սակայն դրանք գտնվելով կղկղանքի մեջ կամ խոնավ հողում, երկար ապրում են իրենց մեջ եղած սննդանյութերի հաշվին: Բարենպաստ պայմաններում դրանք կրկին ակտիվանում են և կորցնում իրենց էներգիայի աղբյուրը: Մի քանի շաբաթ հետո դրանք ոչնչանում են: Սակայն կան տվյալներ, որ դրանք կարող են արոտավայրերում պահպանվել մինչև մեկ տարի:

Բիոհելմինթների թրթուրները փոխանցող տերերի մեջ կարող են կենդանի մնալ այնքան ժամանակ, որքան ապրում են այդ կենդանիները, օրինակ, օրիբատոդային տզերը, անձրևատրոդերը, արյունածուծ միջատները և այլն:

Կենդանիների վարակումը հելմինթներով հիմնականում տեղի է ունենում հելմինթի ձվեր կամ ինվազիոն թրթուրներ կուտալու ճանապարհով, որոնք կարող են լինել ջրում, խոտերի վրա և այլուր:

Բիոհելմինթներով կենդանիները վարակվում են, երբ դրանց թրթուրային ձևերը գտնվելով փոխանցող տերերի մեջ, կուլ են գնում կենդանիներին: Մի դեպքում կենդանիները վարակված միջնորդ տերերին ուտում են իբրև սնունդ, մյուս դեպքում կուլ տալիս պատահականորեն՝ կերի, ջրի հետ: Օրինակ, էխինակոկոզով շները վարակվում են ուտելով էխինոկոկի բշտային ձևով վարակված կենդանիների ներքին օրգանները (լյարդը, թոքերը), որոնցում գտնվում են էխինակոկի բշտերը: Իսկ դիկրոցելյոզի դեպքում կենդանին խոտի հետ պատահական ուտում է դրա վրա մատած դիկրոցելիայի թրթուրով վարակված մրջյունին:

Այսպիսով, կենդանիների վարակումը հելմինթներով հիմնականում տեղի է ունենում արոտավայրերում: Եվ այնտեղ, որքան բարձր է խոնավությունը, այնքան մեծ է հելմինթներով կենդանիների վարակվելիության հնարավորությունը:

Բիոհելմինթներով կենդանիների վարակման վտանգի աստիճանը տվյալ արոտավայրում պայմանավորված է առաջին հերթին այնտեղ եղած միջնորդ տերերի ներկայությամբ:

Կենդանիների մտուրային պահվածքի դեպքում բացառվում է դրանց վարակումը մեծ թվով հելմինթներով, որոնց համար միջանկյալ տերերը անողնաշարավորներն են:


Այս դեպքում նվազում է նաև բիոհելմինթոզներով կենդանիների վարակվե

լու հնարավորությունը, քանի որ հելմինթի ձվերի և թրթուրների զարգացման համար անասնաշենքերում չկան բարենպաստ պայմաններ (միջանկյալ տերեր):

Այսպիսով, ծանոթանալով հելմինթների և հելմինթոզների վերաբերվող խիստ հետաքրքրական տվյալներին, հանրապետության ֆերմերները և անասնատերերը ձեռք կբերեն հելմինթոլոգիական որոշակի գիտելիքներ և անասնապահության մեջ ակնկալելով բավականաչափ տնտեսական շահույթ, շահագրգռված կլինեն կիրառելու գրքույկում նկարագրված կենդանիների հելմինթոզների վերաբերյալ բուժական և կանխարգելիչ որոշակի միջոցառումները, դրանով իսկ նվազագույնի հասցնելով հելմինթոզների քանակը, որի արդյունքում նաև դրանց կողմից հարուցված տնտեսական վնասը:

Ֆասցիոլյոզ

Ֆասցիոլյոզը կենդանիների ճիճվային հիվանդություն է, որով հաճախ հիվանդանում են ոչխարները, այծերը, խոշոր եղջերավորները, սակավ՝ մնացած կենդանիները: Հիվանդության հարուցիչը տափակ (տերևան-



Նկար 1. Սեռահասուն *F. hepatica*
F. hepatica.

ման) ճիճու է, որը տեղակայվում է կենդանիների լյարդում, հատկապես լեղվածորաններում: Հանդիպում է ճիճուների 2 տեսակ՝ սովորական և հսկա ֆասցիոլաներ, վերջիններս 2 անգամ խոշոր են սովորականից:

Արարատյան հարթավայրի տարածաշրջաններում հիմնականում տարածված է հսկա ֆասցիոլան, իսկ մնացած տարածաշրջաններում՝ սովորականը:

Հարուցիչների զարգացման ցիկլը տեղի է ունենում միջնորդ տերերի, ջրային որոշ տեսակի խխունջների մասնակցությամբ: Այդ է պատճառը, որ կենդանիները ֆասցիոլյոզով վարակվում են հիմնականում ճահճուտ և ջրաշատ արոտավայրերում արածելիս, որտեղ ապրում են ջրային խխունջները:

Այս հիվանդությունը Հայաստանում բավականաչափ տարածված է. Արարատյան հարթավայրի տնտեսություններում ոչխարների վարակվածությունը հասնում է 60-80%:

Այս հիվանդությունը զգալի տնտեսական վնաս է պատճառում անասնապահությանը, որը արտահայտվում է կենդանիների մթերատվության (կաթ, միս, բուրդ) խիստ նվազմամբ (20-30%), հաճախ նաև դրանց զանգվածային անկումներով, հատկապես հիվանդության սուր ձևի դեպքում: Ներկայումս, հանրապետու-

թյունում հողի և կենդանիների սեփականաշնորհումից հետո, փոխվել է նաև կենդանիների ֆասցիոլոզով վարակվածության աստիճանը: Դրա հետևանքով ներկայումս կենդանիները ողջ արոտային շրջանում հիմնականում մնալով գյուղամերձ արոտներում, անընդհատ վարակվում են ֆասցիոլոզով, քանի որ հիվանդության միջնորդ տերերը ապրում են գյուղամերձ արոտների տարածքի ճահճուտ վայրերում, ջրավազաններում, անվակներում: Նախկինում, երբ կենդանիները հիմնականում տեղափոխվում էին ամառային արոտներ, որտեղ չկային ջրային խխունջներ, այդ ամիսներին բացառվում էր դրանց վարակումը ֆասցիոլոզով: Դրանք վարակվում էին միայն գարնանը և աշնանը, երբ գտնվում էին գյուղամերձ արոտներում:

Ախտանիշերը

Հիվանդության սուր ձևի դեպքում ոչխարների կուպերի լորձաթաղանթները լինում են գունատ, մարմնի ջերմաստիճանը՝ 41.5, նկատվում են հենորագիկ լուծ, երբեմն կապ, որովայնի փքվածություն, շնչահեղձություն, զարգացող սակավարունություն և մահ:

Խրոնիկ ձևի ժամանակ նկատվում են կենդանիների ընդհանուր թուլություն, ախորժակի անկում, բրդա-

թափություն, հյուծվածություն, կուպերի և ենթածնոտային հատվածների այտուցվածություն: Անկման դեպքում դիակները լինում են հյուծված, որովայնի խոռչում բաց գույնի, իսկ սուր ձևի դեպքում կարմրավուն հեղուկի կուտակում: Լեղվապարկը մեծացած է, լցված խիտ, պղտոր-դարչնագույն լեղվով: Լեղվածորանները կտրելիս նկատվում են մեծ քանակությամբ ֆասցիոլաներ:

Ախտորոշումը կատարվում է կլինիկական նշանների, ընկած կենդանիների դիակների ախտաբանական փոփոխությունների, համաճարակաբանական տվյալների և կենդանիների կոկոզների մուշների լաբորատոր քննության հիման վրա:

Բուժումը և կանխարգելումը

Ֆասցիոլոզով հիվանդ կենդանիների բուժման՝ ճիճվաթափման համար գոյություն ունեն բազմաթիվ դեղանյութեր և մշակված են ճիճվաթափման տարբեր եղանակներ:

Ճիճվաթափման նպատակով գիտության կողմից առաջարկված են ածխածնի քառաքլորատ, հեքսաքլորրեթան, ֆիլիքսան, հեքսաքլորպարաքսիլոլ, դիամֆենետիլ, կարիբան, զանիլ, ռաֆօքսանիլ, դովենիքս, կլազանտել, ֆազինեքս, հեքսիխոլ, ացեմիդոֆեն, բիտիոնոլ, ֆասկովերմ, ուր-

սովերմիտ, նիլվերմ, լեվոմիզոլ և այլ պատրաստուկներ: Մակայն վերջին տարիներին առաջարկվել են պատրաստուկների նոր սերնդի դեղամիջոցներ, որոնք օժտված են ազդեցության լայն սպեկտրով, դրանց մի մասը ազդում է ոչ միայն տափակ որդերի, այլև կլոր որդերի, երիզորդների, ինչպես նաև էկտոպարազիտների վրա: Այդ տեսակետից ներկայումս ֆասցիոլյոզի բուժման համար բավականին արդյունավետ դեղամիջոցներ են համարվում ալբենդազոլը, ատազոլը, ալբենը, ացեմիդոֆենը, հեքսիխոլը և այլն:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ վերը թվարկված դեղանյութերից բոլորը չէ, որ սպանիչ ազդեցություն են գործում ֆասցիոլաների ինչպես սեռահասուն, այնպես էլ ոչ սեռահասուն ձևերի վրա:

Նկատի ունենալով այդ հանգամանքը, մեր կողմից առաջարկվել է ֆասցիոլյոզով հիվանդ կենդանիների ճիճվաթափման նոր եղանակ՝ մուրային պահվածքի անցնելուց հետո կենդանիներին տրվում են ացեմիդոֆեն և հեքսիխոլ պատրաստուկների խարնուրդ, միանվագ: Քանի որ այս շրջանում կենդանու օրգանիզմում գտնվում են ինչպես սեռահասուն, այնպես էլ ոչ սեռահասուն մակաբույծներ, ուստի ացեմիդոֆենը ոչնչացնում է ոչ սեռահասուններին, իսկ հեքսիխոլը՝ սեռահասուն մակաբույծներին: Ֆասցիոլյոզի կանխարգելման համար անհրաժեշտ է կենդանիներին թույլ չտալ արածել ճահճուտ արոտավայրերում, հաճախակի փոփոխել կենդանիների արածեցման տեղերը, հուլիսի վերջերին և օգոստոսի սկզբին, հնարավորության դեպքում, կատարել արոտավայրերի փոփոխություն:

Դիկրոցելիոզ


Դիկրոցելիոզը որոճող կենդանիների ճիճվային հիվանդություն է, որի հարուցիչը տափակ, նշտարած, մինչև 1 սմ երկարության մակաբույծ է, որը տեղակայվում է կենդանիների լեղվածորաններում և լեղապարկում:

Հարուցիչի զարգացման ցիկլը տեղի է ունենում միջնորդ տերերի՝ ցամաքային խխունջների և լրացուցիչ տերերի, որոշ տեսակի մրջյունների մասնակցությամբ:

Կենդանիները վարակվում են արոտավայրում, խոտի հետ վարակված մրջյուններին կուլ տալու դեպքում, իսկ ինտենսիվ վարակը հիմնականում տեղի է ունենում ամռանը և աշնանը: Վարակվածության ինտենսիվությունը, ոչխարների հասակին զուգընթաց, ավելանում է և կարող է հասնել տասնյակ հազար մակաբույծների: Հիվանդությունը բավականաչափ տարածված է մեր հանրապետությունում:

Ախտանիշները

Հիվանդությունը ընթանում է խրոնիկ ձևով, կենդանիները նիհարում են, դանդաղում են աճն ու զարգացումը, հասակավորները կորցնում են մթերատվությունը: Դիակները հերձելիս՝ լեղապարկում և լեղվածորաններում նկատվում են մեծ քանակությամբ մակարոյծներ:



Նկար 2. Մեռահասուն
D. Lanceatum.

Բուժումը և կանխարգելումը

Բուժման համար օգտագործվում է հեքսիխոլ, ինչպես նաև հետոլին, ֆենբենդազոլ, ալբենդազոլ, ալբեն և այլն: Կանխարգելման նպատակով աշնան վերջում կատարվում է կենդանիների ճիճվաթափում և արոտավայրերում խխունջների ու մրջյունների ոչնչացում:

Պարամֆիստոմաֆոզ

Հաճախ հիվանդանում են խոշոր և մանր եղջերավոր կենդանիները: Հարուցիչը տափակ ճիճու է, որը տեղակայվում է կենդանիների բարակ աղիներում և կտրիչում: Հարուցիչը զարգանում է միջնորդ տերերի մասնակցությամբ, որոնք որոշ տեսակի ջրային խխունջներ են: Կենդանիները վարակվում են խտտի, ջրի միջոցով, որոնք վարակված են խխունջների օրգանիզմից դուրս եկած մակարոյծի սաղմերով (ադուլեսկարներով): Հաճախ հիվանդանում է խոշոր եղջերավորների մատղաշը՝ 1-1,5 տարեկան հասակում:

Մեր հանրապետությունում այս հիվանդությունը արձանագրված է մի շարք տարածաշրջաններում, ավելի հաճախ հանդիպում է Արարատյան հարթավայրի տարածքներում:

Պարամֆիստոմաֆոզ հիվանդության սուր ձևը Հայաստանում առաջին անգամ մեր կողմից ախտորոշվել է 1970 թվականին Արմավիրի մարզի Մովեստական և Մրգաշատ գյուղերի տնտեսություններում՝ 1-1.5 տարեկան հորթերի մոտ:

Հետագայում երկարամյա գիտական համակողմանի ուսումնասիրությունների արդյունքում, որպես գիտական նորություն, գրքույկի հեղինակի կողմից պարզվեց, որ այդ հի-

վանդության հարուցիչը *Ziorchis scortiae* մակարույծն է, իսկ դրա միջնորդ տերը *Plunorhis Sieversi* ջրագիծ խխունջը:

Այսպիսով, պարամֆիստոմատոզ հիվանդություններից մեր հանրապետությունում, ըստ հարուցչի անվան, տարածված է լիորիոզ հիվանդությունը:

Ախտանիշերը

Հիվանդության սուր շրջանում նկատվում են ընկճվածություն, ախորժակի անկում, նիհարություն, լուծ, ենթածնոտային հատվածում այտուցավորում, հաճախ անկումներ: Խրոնիկական ընթացքի ժամանակ նկատվում է կենդանիների մթերատվության նվազում և երկարատև լուծ:

Լարրատոր պայմաններում հիվանդ կենդանու կղկղանքի նմուշներում հելիմինթի ձվերի հայտնաբերման ճանապարհով հաստատվում է ախտորոշումը:



Նկար 3. Պարամֆիստոմի ձու:

Քուժումը և կանխարգելումը


Հիվանդ կենդանիների բուժման նպատակով օգտագործվում են բիտիոնոլ, ալբենդազոլ, ալբեն պատրաստուկները: Հիվանդության կանխարգելման նպատակով կենդանիներին պետք է զերծ պահել ճահճուտ արոտավայրերում արածելուց:

Մոնիեզիոզ

Մոնիեզիոզը որոճողների ճիճվային հիվանդություն է, որի հարուցիչը տափակ, ժապավենաճանճան, 4-10 մետր երկարությամբ, սեզմենտավոր մակարույծ է, որը տեղակայվում է կենդանիների բարակ աղիներում: Այս հիվանդությամբ մեծ մասամբ հիվանդանում են գառները և հորթերը, հիվանդությունը հաճախ ավարտվում է անկումներով:

Հարուցիչի զարգացման ցիկլը տեղի է ունենում հողում ապրող օրիբատիդային տեսակի տզերի մասնակցությամբ, որոնք մեծ քանակությամբ գտնվում են հողի մակերեսին: Վարակված տզերին խոտի հետ կուլ տալու ուղիով կենդանիների օրգանիզմում զարգանում է նշված մակարույծը:

Վարակը տեղի է ունենում գառների և հորթերի արոտ դուրս գալու առաջին իսկ օրերից:



Նկար 4. Մոնիեզիայի հողվածը:

Հիվանդությունը տարածված է ամենուրեք և տնտեսական մեծ վնաս է պատճառում անասնապահությանը: Այս հիվանդության ժամանակ կարող է ոչնչանալ հիվանդ կենդանիների շուրջ 40%-ը:

Ախտանիշերը

Կլինիկական նշանները ի հայտ են գալիս կենդանիների արոտ դուրս գալուց 20-30 օր հետո, նշանների արտահայտվածության չափը կախված է վարակի ինտենսիվությունից: Աննշան վարակվածության դեպքում կլինիկական նշանները թույլ են արտահայտվում, ինտենսիվ վարակի դեպքում՝ ընդհակառակը. հիվանդությունը ընթանում է ծանր նշաններով և հաճախ վերջանում է կենդանիների անկմամբ: Նկատվում է լուծ, կղկղանքին հաճախ խառնված են ճիճուների սեզմենտներ, շատ հաճախ նկատվում են նյարդային երևույթներ, ցնցումներ,

տեղում պտտվում են, հիվանդության վերջում պառկում են գլուխը ետ գցած, որոճի շարժումներ են կատարում, բերանի շուրջը փրփրակալում է:

Անկած կենդանիների աղիները լինում են փքված, բարակ աղիներում նկատվում են բազմաթիվ երիզորդներ:

Բուժումը

Բուժման նպատակով օգտագործվում են պղնձարջասպի 1%-ի լուծույթը, ֆենասալը, զառիկաթմիային անագը, բիտիոնոլը, ֆելիկսանը, ցեսալը, ֆենստոլեկը, ֆենալգոնը, ֆենասալը, ավելի արդյունավետ են ալբենդազոլը, ալբենը և այլն:

Քանի որ կենդանիների օրգանիզմում մոնիեզիաների զարգացման ժամկետը առնվազն 37-39 օր է, իսկ վարակումը մոնիեզիաներով կարող է տեղի ունենալ արոտ դուրս գալու հենց առաջին օրերից, ուստի անհրաժեշտ է կենդանիներին ճիճվաթափել մինչև ճիճուների սեռահասուն դառնալը:

Այսպիսով, կենդանիների առաջին ճիճվաթափումը անհրաժեշտ է անցկացնել դրանց արոտ դուրս գալու 25-30 -րդ օրը: Երկրորդ ճիճվաթափումը իրականացնել առաջինից 15-20 օր հետո, երրորդը՝ երկրորդից 30 օր հետո, աշնանը (սեպտեմբերին) չորրորդ անգամ:

Ցեմուրոզ (պտուտախտ)

Ցեմուրոզը որոճող կենդանիների

ճիճվային հիվանդություն է, որի հարուցիչը երիզորդի թրթուրային ձևն է: Մեռահասուն երիզորդները մակաբուծում են հիմնականում հոտերին սպասարկող շների բարակ աղիներում, որոնց օրգանիզմից կղկղանքի հետ արտազատվելով մակաբույծի սեզմենտները, ձվերով վարակում են արոտավայրերը: Այնտեղից խոտի, ջրի միջոցով անցնում են որոճողների օրգանիզմ, տեղակայվում գանգուղեղում, առաջացնելով բուշտ: Շները երիզորդով վարակվում են հիվանդ կենդանիների ուղեղում եղած բուշտը ուտելու ժամանակ:

Ցենուրոզով հիվանդանում են հատկապես գառները: Հիվանդությունը մեծ մասամբ ավարտվում է կենդանու անկմամբ:

Ախտանիշերը

Հիվանդությունը ընթանում է սուր և խրոնիկ ձևով: Սուր ձևը առաջ է գալիս գառների վարակման առաջին օրերին, որի ժամանակ նկատվում են վախի նշաններ, մկանային ցնցումներ, երբեմն պարալիզ: Այս նշանները 5-7 օր հետո վերանում են, կարող են արձանագրվել նաև անկման դեպքեր: Հիվանդության խրոնիկական շրջանում, որը արտահայտվում է վարակումից 2,5-8 ամիս հետո, կենդանիները կատարում են շրջանաձև շարժումներ կամ գլխով հենվում որևէ ա-

ռարկայի, երբեմն գլուխը ետ գցում, ընկնում են, կատարում ջղաճիգ կծկումներ: Այսպիսի նոպաները տևում են մի քանի րոպեից մեկ ժամ: Նշանների արտահայտման ձևերը կախված են ուղեղում բշտի տեղակայման տեղից և դրա մեծությունից:

Ցենուրոզը տնտեսական զգալի վնաս է պատճառում անասնապահությանը: Դրանով հիվանդանում են մեծ քանակությամբ գառներ, որոնց շուրջ 35%-ը անկում է, իսկ մնացած հիվանդներին ենթարկելով հարկադիր մորթի, տնտեսությունը տուժում է նաև այն տեսակետից, որ չափազանց հյուծված գառների մսի իրացումից ստացվում է աննշան շահույթ:

Բուժումը և կանխարգելումը

Բուժումը կատարվում է վիրաբուժական եղանակով՝ գառների գանգից հեռացնելով բուշտը իր պարունակյալով: Այս մեթոդը բավականաչափ անհուսալի է, ուստի ավելի նպատակահարմար է հիվանդ կենդանուն ենթարկել հարկադիր մորթի: Հիվանդության կանխարգելման համար խիստ կարևոր է անկման կամ հարկադիր մորթի ենթարկված կենդանու գլուխը շներից չտալը կամ միայն լավ եփելուց հետո տալը: Կազմակերպել անտեր և թափառող շների ոչնչացում: Համաձայն գործող հրահանգի, ան-

պայման անցկացնել հոտերին սպասարկող շների ճիճվաթափում:

Ֆիստիցերկոզ (ֆիսոզ)

Հիմնականում խոշոր եղջերավորների և խոզերի ճիճվային հիվանդություն է, որը առաջ է գալիս մարդկանց աղիներում մակաբուծող երիզորդների ձվերով վարակվելիս: Երբ երիզորդներից անջատված հազարավոր ձվերով լի սեզմենտները ընկնելով արտաքին միջավայր, կուլ են գնում խոշոր եղջերավորներին կամ խոզերին. կերի, ջրի հետ կուլ գնացած ձվերից դուրս են գալիս մակաբույծի թրթուրային ձևերը և տեղակայվելով աղիների պատում, մտնում են արյան հոսքի մեջ, տեղադրվում մկաններում, որտեղ էլ զարգանալով, դառնում են սպիտակ, ցորենի հատիկի մեծությամբ թափանցիկ բշտեր (ֆինաներ):




Նկար 5. Ֆիստիցերկոզներով վարակված միս:


Երբ մարդիկ ուտում են ֆինաներով վարակված կենդանու միսը ոչ լավ եփած վիճակում, նրանց բարակ աղիներում զարգանում է սեռահասուն երիզորդը, որը կարող է հասնել մի քանի մետր երկարության:



Նկար 6. Սեռահասուն երիզորդ:



Նկար 7,8. Սեռահասուն երիզորդի գլխիկը:



Նկար 9. Սեռահասուն երիզորդի մարմնի հատվածները:

Ֆիստիցերկոզը, որպես հիվանդություն, կենդանիների մոտ առանձնապես ախտանիշներ չի արտահայտում, սակայն ցիստիցերկոզով ախտահարված միսը խիստ վտանգ է ներկայացնում մարդու համար, առաջացնելով տենիարիինխոզ հիվանդությունը, որը ընթանում է բավականին ծանր ախտանիշներով: Ֆինոզով խիստ վարակված միսը ամբողջովին խտանվում է, իսկ թույլ վարակվածության դեպքում օգտագործվում է լավ եփելուց հետո:

Ախտորոշումը


Ֆինոզը ախտորոշվում է մորթված կենդանու ծամելիքի, սրտի մկանների բազմաթիվ կտրտվածքների միջոցով, ֆինանների հայտնաբերման ճանապարհով:

Բուժումը և կանխարգելումը

Բուժման համար լավ արդյունք է ստացվում դրոնցիտի օգտագործման ժամանակ: Հիվանդության կանխարգելման նպատակով անհրաժեշտ է կենդանիների հետ շփվող մարդկանց ստուգել տենիարիինխոզ հիվանդության նկատմամբ, որի հայտնաբերման դեպքում նրանց ենթարկել ճիճվաթափման: Ֆինայով վարակված միսը և օրգանները խտանվում են:

Էխինակոկոզ


Էխինակոկոզը հիմնականում որոճող կենդանիների ճիճվային հիվանդություն է, որը առաջ է գալիս շնեռի բարակ աղիներում ապրող սեռահասուն էխինակոկ ժապավենաձև ճիճուների կողմից արտաքին միջավայր արտազատվող ձվերի միջոցով: Երբ դրանք կերի, ջրի հետ ընկնում են կենդանիների օրգանիզմ, լյարդում, թոքերում զարգանում է այդ մակարույծի բշտային ձևը:



Նկար 10. Էխինոկոկի բշտային ձևը:

Կախված վարակվածության ժամկետից, բշտերը կարող են հասնել մինչև երեխայի գլխի մեծության: Բշտերը պարունակում են թափանցիկ հեղուկ, որի մեջ գտնվում են էխինոկոկի մեծ քանակությամբ սաղմեր:

Շները վարակվում են էխինակոկի բուշտով վարակված օրգանները ուտելու պատճառով:



Նկար 11. Էխինակոկի սեռահասուն ձևը:

Ախտանիշերը

Հիվանդությունը ընթանում է խրոնիկ ընթացքով, երկարատև է, առանց խիստ արտահայտված ախտանիշերի: Ինտենսիվ վարակի դեպքում կենդանիները նիհարում են, դանդաղում են դրանց աճն ու զարգացումը: Պարզված է, որ էխինակոկով հիվանդ յուրաքանչյուր ոչխարի մորթից հետո պակաս է ստացվում 2,6 կգ միս, 0,4կգ ճարպ, 0,4 կգ բուրդ, իսկ էխինակոկով վարակված յուրաքանչյուր խոշոր եղջերավորի մորթից հետո պակաս է ստացվում 5,5 կգ միս, 2,5 կգ ճարպ: Բացի այդ, խտանվում են նաև էխինակոկով վարակված օրգանները: Իսկ հիվանդ յուրաքանչյուր կովից, լակտացիայի ընթացքում, համեմատած առողջի հետ, ստացվում է 180լ պակաս կաթ:

Բուժումը և կանխարգելումը

Թրթուրային (լարվալ) բշտային էխինակոկի նկատմամբ բուժում

մշակված չէ: Կանխարգելման նպատակով միջոցառումներ են ձեռնարկվում նշված մակարոյժի զարգացման կենսաբանական շղթան կտրելու ուղղությամբ:

Անհրաժեշտ է ճիճվաքափել ոչխարի հոտերը սպասարկող շներին 45 օրը մեկ անգամ, իսկ մնացած շներին՝ տարեկան 1-2 անգամ: Մորթված կենդանիների էխինակոկով վարակված օրգանները պետք է ոչնչացնել: Շներին չկերակրել էխինակոկով վարակված օրգաններով:

Շճային ծածկույթի ցիստիցերիոզ

Այս հիվանդության հարուցիչը շների սեռահասուն երիզորդի թրթուրային ձևերն են, որոնք իրենց շուրջ առաջացնելով բշտեր, տեղակայվում են ոչխարների, այծերի, խոշոր եղջերավորների, խոզերի աղիների միզուկների և ճարպոնների վրա, թրթուրները անցնելով լյարդով, երբեմն առաջ են բերում դրա հյուսվածքի զգալի վնասվածություններ, որոնք կարող են հանգեցնել կենդանիների անկման:

Նախազգուշական միջոցառումները մոտավորապես այնպիսին են, ինչպիսին էխինակոկոզի դեպքում:

Դիկտիոկաուլյոզ

Դիկտիոկաուլյոզը որոճող կենդանիների ճիճվային հիվանդություն

է, որի հարուցիչը տեղակայվում է կենդանիների բրոնխներում և շնչափողում: Սպիտակավուն, թելանման, 8-15 սմ երկարությամբ կլոր որդ է:




Նկար 12. Սեռահասուն դիկտիոկաուլա:

Հարուցիչը զարգանում է առանց միջնորդ տիրոջ մասնակցության: Հիվանդանում են հիմնականում երիտասարդ հասակի որոճողները, ավելի հաճախ՝ մինչև մեկ տարեկան հասակում: Հիվանդությունը խիստ տարածված է լինում շոգ, խոնավ վայրերում և առատ տեղումների տարիներին:

Ախտանիշերը

Նկատվում են երկարատև ցավագագ հագ, դժվար շնչառություն, քթանցքներից լորձային արտահոսք, երբեմն ջերմաստիճանը հասնում է 42 -ի:

Ինտենսիվ վարակվածության դեպքում սակավարունություն, հյուծվածություն, հիվանդ կենդանու միջձնոտային և կրծքային հատվածներում այտուցավորում: Մուր ընթացքի դեպքում կենդանիները մեծ մասամբ անկում են:



Նկար 13. Դիկտիոկաուլայի թրթուրը:

Բուժումը և կանխարգելումը

Դիկտիոկաուլոզով հիվանդ կենդանիների ճիճվաթափման համար գոյություն ունեն բազմաթիվ դեղամիջոցներ, որոնցից են՝ դիտրազինը, լոկսուրանը, միլվերմը (տետրամիզոլ), ցիազոնը, մեբենդազոլը, մեբենվետը, ֆենբենդազոլը, պանակուրը և այլն: Վերջին ժամանակները դիկտիոկաուլոզի դեմ արդյունավետությամբ օգտագործվել են մի շարք պատրաստուկներ: Ինչպիսիք են՝ ալբազոնը, ալբենդազոլը, ատազոլը, ալբենը, լեվամիզոլը և այլն: Նշված պատրաստուկները միաժամանակ սպանիչ ազդեցություն են գործում կենդանու օրգանիզմում եղած նաև այլ կլոր որդերի, ինչպես նաև երիզորդների, տափակ որդերի և էկտոպարազիտների վրա: Իսկ դա խիստ կարևոր է այն առումով, որ մեկ միջոցառման ընթացքում հնարավորություն է ստեղծվում

պայքարել բազմաթիվ մակաբույծների դեմ: Հիվանդության կանխարգելման համար անհրաժեշտ է, հնարավորություն դեպքում, հաճախակի փոփոխել արտավայրերը, յուրաքանչյուրում կենդանիներին արածեցնել 5 օրից ոչ ավել և վերադառնալ նախորդ արտավայր 3 ամսից ոչ շուտ կան հաջորդ տարի: Մատղաշներին արածեցնել հասակավորներից առանձին:

Որոճողների մարսողական համակարգի սպորոնգիլյաֆոզներ

Ոչխարների, այծերի, խոշոր եղջերավորների մարսողական համակարգում կարող են մակաբուծել հարյուրից ավել տեսակի կլոր որդեր, որոնք, ըստ իրենց կառուցվածքի ընդհանրության և կենսակերպի, միավորվում են ստրոնգիլյատների մեկ ընդհանուր խմբի մեջ: Գործնականում այս կան այն ստրոնգիլյատները հանդիպում են բոլոր կենդանիների մոտ, որոշակի ձևով ազդելով դրանց մթերատվության վրա, կախված դրանցով վարակվածության ինտենսիվությունից:

Հիմնականում վարակված են լինում մի քանի կան բազմաթիվ տեսակի ստրոնգիլյատներով: Մակայն

դրանց հարուցած հիվանդություններից առավել խիստ վտանգավոր և վնասակար են հետևյալ ստրոնգիլյատները և ինվազիաները՝

Հեմոնխոզի հարուցիչը բարակ, մազանման, կարմրավուն, 3 սմ երկարությամբ կլոր որդն է՝ տեղակայված կենդանիների շրդանում, որի հետևանքով դրա լորձաթաղանթը բորբոքվում է և խանգարվում դրա ֆունկցիան: Երբեմն այս հիվանդությունը կարող է դառնալ ոչխարների, այծերի և հորթերի զանգվածային անկումների պատճառ:

Խաբերտիոզի հարուցիչը ունի 2-2,5 սմ երկարություն, տեղակայվում է հաստ աղիներում: Այս հեմիմիթոզը ևս երբեմն պատճառ է դառնում կենդանիների զանգվածային անկումների:

Տրիխոստրոնգիլյատների բուժման համար օգտագործվում է այլբենդազոլ պատրաստուկը, որը ունի բավականաչափ բուժական արդյունավետություն: Հիվանդության կանխարգելումը նույն է, ինչը դիկտիոկատուլյոզի դեպքում:

Չավերի ասկարիդիոզ

Հիվանդության հարուցիչը կլոր ճիճու է, որը տեղակայում է հավերի

աղիներում: Տարածված է ամենուրեք, հաճախ ընթանում է էպիզոտիայի ձևով՝ հանգեցնելով մեծաքանակ անկման դեպքերի: Հավերը վարակվում են արտաքին միջավայրից ասկարիդների ձվեր կուլ տալու դեպքում, հիմնականում հիվանդանում են հավի ճտերը: Դրանք վարակվում են ապրիլ ամսից սկսած, առավելագույն վարակվածությունը նկատվում է օգոստոսին:

Ախտանիշերը

Ճտերը լինում են ընկճված, նիհարում են, աճը և զարգացումը դանդաղում են, նկատվում է լորձաթաղանթների անարյունություն: Հերձման ժամանակ նկատելի են մկանների գունազրկում, աղիների պատի այտուցավորում և արյունակալում:


Բուժումը և կանխարգելումը

Բուժման համար օգտագործում են պիպերազինի աղեր, ալբենդազոլ, պիզրան, րինտալ, ատազոլ և այլն:

Հիվանդության կանխարգելման նպատակով անհրաժեշտ է թռչնանոցները հաճախակի ենթարկել ախտահանության, թռչնաղբը ենթարկել բիոթերմիկ մշակման:

Խոզերի ասկարիդոզ

Խոզերի ճիճվային հիվանդություն է, որի հարուցիչը կլոր որդ է, 12-30սմ երկարությամբ, այն տեղակայվում է կենդանիների բարակ աղիներում:



Նկար 14. Սեռահասուն *Ascarida suum*



Նկար 15, 16. Աղիների ախտահարումը սեռահասուն ասկարիդներով:

Հիվանդանում են հիմնականում 1-7 ամսեկան խոճկորները, տարածված է ամենուրեք: Խոճկորները վարակվում են կերի, ջրի հետ կուլ տալով ասկարիդի ձվերը, որոնցից դուրս

եկած թրթուրները տեղակայում և զարգանում են կենդանիների բարակ աղիներում:

Ախտանիշերը

Քանի որ ասկարիդների թրթուրները սկզբից տեղակայվում են խոճկորների թոքերում, ուստի դրանց մոտ նկատվում են հազ, արագացած շնչառություն, ջերմաստիճանի բարձրացում, երբեմն նաև թոքերի բորբոքում, կենդանիները պառկում են, թաղվում ցամքարի մեջ, նկատվում են փսխման դեպքեր: Այդ երևույթները տևում են 6-15 օր: Մակաբույծներով վարակված խոճկորները հյուծվում են, նկատվում է լուծ, խիստ վարակվածության դեպքում՝ աղիների խցանում, մուլնիսկ պատռում: Որոշ խոճկորների մոտ նկատվում են ջղաձգություններ, նյարդային նոպաներ, որոնք մի քանի րոպեից հետո անցնում են: Անկած խոճկորների թոքերի վրա նկատվում են զանգվածային արյունազեղումներ, բարակ աղիներում բազմաթիվ ճիճուներ: Ասկարիդոզը զգալի տնտեսական վնաս է պատճառում խոզաբուծությանը, դանդաղեցնում կենդանիների աճը և զարգացումը, խոճկորների օրական քաշաճը պակասում է 100-200 գրամով, կաթից կտրված խմբում, առողջների համեմատությամբ, հիվանդ խոճկորները 20-30 կգ-ով պակաս են կշռում: Մսի որակը և սնն-

դարժեքը առողջ խմբի խոճկորների համեմատությամբ, 30% -ով պակաս են լինում, հաճախ նկատվում են նաև անկման դեպքեր:

Բուժումը և կանխարգելումը

Բուժման համար օգտագործում են կրեմնաֆտորային նատրիում, դիտրազին, ալբենդազոլ, ալբեն, ֆենբենդազոլ, մեբենդազոլ, բենացիլ, միլվերմ և այլ դեղամիջոցներ:

Հիվանդության կանխարգելման համար անհրաժեշտ է անցկացնել խոճկորների նախազգուշական ճիճվաթափում, առաջին ճիճվաթափումը անցկացնել խոճկորների ծնվելուց 35-40 օր հետո, երկրորդը՝ առաջինից 2 շաբաթ հետո, երրորդը՝ խոճկորներին ծծից կտրելուց մեկ ամիս հետո: Խնամքով մաքրել խոզանոցի հատակը, հաճախակի ախտահանել տարբեր ախտահանիչներով (4%-ոց կծու նատրիում, 10-12%-ոց հանգած կրի լուծույթ) կամ եռման մոխրաջրով:

Տրիխինելյոզ

Կենդանիների և մարդու ճիճվային հիվանդություն է, առաջ է գալիս կլոր որդերի կողմից, որոնք սեռահասուն շրջանում մակաբուծում են կենդանիների աղիներում, իսկ թրթուրային շրջանում՝ միջաձիգ - գծավոր մկաններում: Տրիխինելյոզով հիվան-

դանում են շուրջ 100 տեսակի կենդանիներ, այդ թվում շները, կատուները, խոզերը, վայրի կենդանիները, կրծողները, թռչունները, հիվանդանում է նաև մարդը:

Տրիխինելաների զարգացումը տեղի է ունենում մեկ տիրոջ օրգանիզմում, սկզբից բարակ աղիների լորձաթաղանթում, հետագայում՝ մկաններում: Վարակը տեղի է ունենում ախտահարված կենդանիների միսը ուտելու ժամանակ: Դրանում եղած թրթուրները տեղակայում են աղիքի պատի մեջ, որտեղ աճելով վեր են ածվում հասուն տրիխինելաների, որոնք արյան հոսանքով տեղափոխվում և տեղակայվում են մկաններում, ծածկվելով ամուր թաղանթով՝ այդ վիճակում ապրելով երկար տարիներ:

Խոզերը վարակվում են այս հիվանդությամբ վարակված վայրի կենդանիների, առնետների կամ սպանդանոցային չեփած խոհանոցային թափոններ ուտելու դեպքում: Իսկ մարդիկ վարակվում են հիվանդ խոզերի միսը օգտագործելու դեպքում: Այդ պատճառով անհրաժեշտ է խոզի միսը ենթարկել հատուկ զննության (տրիխինելոսկոպիա):

Տրիխինելաներով վարակված միսը անպայման խոտանվում է, որը մեծ տնտեսական վնաս է պատճառում խոզաբուծությանը:

Բուժումը և կանխարգելումը

Բուժման համար օգտագործվում են մեքենդազոլ, ֆենբենդազոլ, ալբենդազոլ, ռինտալ, պիպերազին և այլն:

Հիվանդության կանխարգելման համար անհրաժեշտ է բացառել խոզերի կերակրումը հում կամ վատ եփած մսեղիքի թափոններով: Տրիխինելոսկոպիայի արդյունքում դրական արդյունք ստացած կենդանիների միսը անհապաղ խոտանվում է, կազմակերպվում պայքար կրծողների դեմ և այլն:

Հ.Հ.ՔԱԴԵՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Կենդանաբուժական բժկության
գիտությունների միջազգային
ակադեմիայի ակադեմիկոս

Գրախոսող՝

Ա.Ս. Հայրապետյան

Հայաստանի Հանրապետության
Կենդանաբուժական բժկության
գիտությունների միջազգային
ակադեմիայի ակադեմիկոս,
Գյուղատնտեսության աջակցության
հանրապետական կենտրոնի
փոխտնօրեն

Խմբագիր՝

Ռ. Պ. Գրիգորյան

Տպագրված է ԳԱՅԿ տպարանում, պատվեր թիվ 40,
տպաքանակ՝ 500:
Հասցե՝ Երևան, Մամիկոնյանց 39ա: